

ՀՏԴ 929: 947.925 Արիստակես Լաստիվերցի + 281.6

Doi:10.54503/0135-0536-2024.1-258

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՄ*

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Արիստակես Լաստիվերցի, ժանրակազմ առանձնահատկություն, գրաբար տեքստի աշխարհաբարի փոխադրում, Գաղիկ Ա թագավորը հավանական պատվիրատու:

Նախաբան

Հայ պատմագրական արձակն ունեցել է կայուն ձևավորված ժանրակազմ առանձնահատկություններ, որոնցից է նաև պատմության պատվիրատու ունենալու հանգամանքը: Արիստակես Լաստիվերցու պատմության պատվիրատուն, սակայն, անհայտ է հայագիտությանը: Ընդունված է, որ պատմիչը պատմությունը գրել է առանց որևէ մեկի պատվերի:

Արիստակես Լաստիվերցու անունով մեզ են հասել «Արիստակես վարդապետ Լաստիվերցու Պատմությունը՝ մեր շրջապատի այլացեղ ազգերից մեզ հասած արհավիրքների մասին» պատմագիրքը, նաև չորս ճառեր՝ «Մեկնություն ընթերցողներին» և «Արիստակես վարդապետի ասացեալ ի նոր կիւրակէն», «Արիստակիսի հայոց վարդապետի վասն ութօրեայ նաւակատեացն որ գկնի Աստուածայտնութեանն կատարի», «Արիստակէս վարդապետի ասացեալ մեծի հինգշաբթին Ոտնյուլային խորհուրդ»:

Հայագիտության մեջ Արիստակես Լաստիվերցուն անդրադարձել են սկսած Մ. Չամչյանից՝ մինչև մեր օրերը: Արիստակես պատմիչի մասին պահպանվել են Մխիթար Անեցու², Մատթեոս Ուռհայեցու³, Կիրակոս Գանձակեցու⁴, Մխիթար Այրիվանեցու⁵, Առաքել Դավրիժեցու մատենագրական վկայությունները:

Հնագույն վկայությունը Մխիթար Անեցուն է, որ պատմիչների շարքում թվարկում է նրա անունը՝ «Լաստիվերցի» ձևով, իսկ Ուռհայեցին՝ «Սալյահան կամ Լաստիվերցի», Կիրակոս Գանձակեցին՝ «Լաստիվերցի կոչված Արիստակես վարդապետը», Մխիթար Այրիվանեցին երկու անգամ հիշատակում է անունը՝ «Արիստակէս Լաստիվերտացի» ձևով:

* Ներկայացվել է 24. I. 2024 թ., գրախոսվել է 29. I. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:

¹ Տե՛ս Չ ա մ չ ե ա ն ց. 1784, 15:

² Ա ն ե ց ի. 2023, 59:

³ Ու ռ հ ա յ ե ց ի. 1991, 194–195:

⁴ Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1982, 24:

⁵ Ա յ ը ի վ ա ն ե ց ի. 1867, 37, 72:

Արիստակես Լաստիվերցին և նրա պատմության տպագիրները

Լաստիվերցու ծննդյան և մահվան թվականներն անհայտ են: Ծնվել է XI դարի սկզբներին Կարնո դաշտի Լաստիվեր գյուղում՝ հիմք ընդունելով իր պատմության այն հատվածը, որտեղ Արծն քաղաքի մասին գրում է. «Հայրապետը դուրս գալով՝ եկավ մեր այս մեծանիստ ու արքայական քաղաքը, մեծ ուրախություն պատճառելով տեսնողներին, որոնք կարոտ էին նրան»⁶: Հետաքրքիր է, որ պատմության ԺԲ գլխում քաղաքի մասին ևս գրում է. «Եվ իբրև պատվական մի ակ մեր այս քաղաքը լուսազեղ պայծառությամբ փայլում էր բոլոր քաղաքների մեջ, ամեն ինչով գեղեցիկ, ամեն ինչով զարդարուն»⁷:

Արծնը գտնվում է Կարնո դաշտում՝ էրզրում քաղաքից մոտ 10 կմ դեպի հյուսիս-արևմուտք: Լաստիվեր գյուղն Արծնի շրջակայքում է՝ Կարնո դաշտում. «Սալահաճնն կամ Լաստիվերտցին, յայտնապէս ծանօթ պատմագիր Արիստակէս վարդապետն է, Կարնոյ դաշտի Լաստիվերտ գիւղէն, որ Սալահաճն ալ կոչուած է, եւ այսօր ալ Սալնաձոր կը կոչուի»⁸:

Արիստակեսի պատմության հենց առաջին տպագրության մեջ աշխատաւորողը գրում է. «Մատենագիրս ողբերակ եկաց պատմիչ ընդմիջել մետասաներորդ դարուն, ծնեալ ի Լաստիվերտ աւանի առ երի Արծնոյ»⁹:

Այսուամենայնիվ, Գուրգեն Մանուկյանը գրում է, թե «որտեղ է Լաստիվերը, մեզ անհայտ է: Ինչ վերաբերում է Արծնի մասին նրա ասածին՝ «մեր քաղաքը» («քաղաքս մեր»), այն չի կարող ապացույց լինել, որ Լաստիվերը անպայման Արծնին մոտ կամ կից է եղել»¹⁰: Հայագիտության մեջ ավանդաբար չարունակում են Արիստակեսին համարել Արծնի մերձակա Լաստիվեր ավանի ծնունդը¹¹:

Պատմության Գ գլխում խոսելով Բարսեղ Բ կայսեր (976–1025) դեմ Նիկեփորոս Բ Փոկասի կազմակերպած ապստամբության ճնշման մասին՝ պատմիչը գրում է, թե «միայն այս հավաստի գիտեմ և իմ աչքով էլ տեսա, որ նրանք, ովքեր գնացին նրա վրա, ծիծաղելի մահով մեռան, ինչպես եղավ առաջին անգամ, իր թագավորության սկզբում, երբ նրա դեմ ապստամբեց Վարդը, որ կոչվում է Սիկլաոս»¹²: Այս դեպքերը տեղի են ունեցել 1022 թ., իսկ սա նշանակում է, որ Արիստակեսն այս ժամանակ առնվազն պետք է եղած լինի 20 տարեկան. հետևաբար նրա ծնունդը կարելի է համարել մոտ 1000 թվականը:

Պատմության ԺԲ գլխում Արծն քաղաքի 1048 թ. կոտորածի մասին Լաստիվերցին գրում է որպես ականատես. «Մենք գրեցինք երկու տեղերի՝ լեռան և այս քաղաքի ողբալի պատմությունը, այսինքն՝ միայն այն, ինչ աչքով տեսանք, անցնելով նրա չարաղետ փորձությունների միջով»¹³:

Պատմության վերջում Արիստակեսը գրում է 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական զորքի պարտության և Ալփի Արսլանի հաղթության մասին: Ավելին՝ հիշատակում է նաև Ռոմանոս Դիոգենես կայսեր մահը

⁶ Լ ա ս տ ի վ երցի. 1971, 37:

⁷ Լ ա ս տ ի վ երցի. 1971, 47:

⁸ Օրմանես. 2001, 1487:

⁹ Պատմութիւն Արիստակէսայ Վարդապետի Լաստիվերտցւոյ. 1844, 1:

¹⁰ Լ ա ս տ ի վ երցի. 1971, VII:

¹¹ Տէս Տէր-Վարդանես. 2012, 493:

¹² Լ ա ս տ ի վ երցի. 1971, 11:

¹³ Լ ա ս տ ի վ երցի. 1971, 51:

1071 թ., նաև՝ Արփի Արալյան սուլթանի (1063–1072) մահը: Հաշվի առնելով, որ պատմիչը Ուռհան անվանել է բյուզանդական քաղաք՝ կարելի է ենթադրել, որ այն ավարտվել է 1087 թ. առաջ, քանի որ այդ թվականին սելջուկները գրավեցին Ուռհան:

Հիշյալ փաստերի հաշվառմամբ էլ Գևորգ Տեր-Վարդանյանը գրել է. «Պատմութիւնը գրել է ամենայն հավանականութեամբ 1072–1079 թթ. միջև»¹⁴:

Լաստիվերցու Պատմությունը 1844 թ. գրաբար բնագրով հրատարակել են Մխիթարյանները Վենետիկում¹⁵, ապա այն 1901 թ. վերահրատարակվել է կրկին Վենետիկում¹⁶, իսկ 1912 թ. Թիֆլիսում¹⁷: Պատմության քննական բնագիրը կազմել է 1963 թ. հրատարակել է հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանը¹⁸:

Դեռևս 1893 թ. Մինաս քահանա Տեր-Պետրոսյանցն աշխարհաբարի է փոխադրել Պատմությունը¹⁹, որը կատարել էր ոչ քննական բնագրից: Ապա Կ. Յուզբաշյանի կազմած բնագրի է 1844 թ. գրաբար բնագրի համեմատությամբ արևելահայերենի է փոխադրել Վազգեն Գևորգյանը, իսկ առաջաբանն ու ծանոթագրությունները գրել է Գուրգեն Մանուկյանը: Պատմության այս գիրքը վերահրատարակվել է 1971 թ.²⁰: Պատմության վերջին քննական բնագիրը, որը տպագրվել է «Մատենագիրք Հայոցի» ԺԶ հատորում, պատրաստել է Գ. Մանուկյանը, լրացումներն ու վերջնամշակում է կատարել Գ. Տեր-Վարդանյանը՝ գրելով, թե սա ևս «կատարեալ բնագիրը չէ»²¹:

Լաստիվերցու Պատմության համառոտ բովանդակությունը

Արիստակես Լաստիվերցու պատմությունը նախադեպը չունեցող պատմագեղարվեստական մի մատյան է: Պատմության ժամանակը ԺԱ դարն է՝ ողբերգական անցքերով: Այդ նկատառումով էլ Լաստիվերցին պատմության Ա գլուխը՝ «Հայոց աշխարհում կատարված անցուղարձերը» վերնագրով, սկսում է մի քնարական ողբով՝ «Չարչարանքների օրեր մեզ հասան» սկսվածքով.

«Արևելքից սուր, արևմուտքից մահ.
Հյուսիսից սպանդ և հարավից հուր.
Ուրախությունը երկրից վերացավ.
Ամենուր լուեց ձայնը քնարի,
Լուեց թմբուկի բոմբյունը զվարթ,
Բարձրացան ողբի աղաղակները»²²:

¹⁴ Տ է ր - Վ ա ր դ ա ն ե ա ն. 2012, 493:

¹⁵ Տե՛ս Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտցույ. 1844:

¹⁶ Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտցույ. 1901:

¹⁷ Պատմութիւն Արիստակեսայ Վարդապետի Լաստիվերտցույ. 1912:

¹⁸ Տե՛ս Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցույ. 1963:

¹⁹ Արիստակէս Լաստիվերտցի Վարդապետի Հայոց պատմութիւն. 1893:

²⁰ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971:

²¹ Տ է ր - Վ ա ր դ ա ն ե ա ն. 2012, 512:

²² Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 2:

Պատմության Ա գլուխը սկսվում է Տայքի իշխան Դավիթ Կյուրապաղատի մահվան և բյուզանդական կայսր Վասիլ Բ-ի՝ դեպի Տայք կատարած արշավանքով, և, ինչպես պատմիչն է վկայում, Վասիլ Բ-ն Տայքից վերադարձավ Կոստանդնուպոլիս, որը «կատարվեց չորս հարյուր հիսուն թվականին», այն է՝ 1001 թվականին: Սա առաջին վկայությունն է, որն ազդարարում է Լաստիվերցու Պատմության ժամանակը:

Պատմության Բ գլուխը՝ «Հայոց թագավորության մասին», սկսում է «Հզոր և պատերազմներում հաղթող»²³ Գագիկ Ա Բագրատունի թագավորից (990–1020): Ապա այդ նույն գլխում հպանցիկ անդրադարձ կա նաև Հովհաննես Սմբատի ժամանակին և նրա կողմից թուլամորթորեն Անին Բյուզանդիայի կայսերը կտակելուն:

Վահրամ Պահլավունու ջանքերով 1045 թ. թագավոր է հռչակվում Աշոտի որդի Գագիկ Բ-ն, սակայն Վեստ Սարգիսն անհնազանդություն է հանդես բերում՝ «թագավորական գանձերն առնելով մտավ միջնաբերդը՝ անառիկ Անին: Գագիկը տղամարդու քաջասրտությամբ միայնակ գնաց նրա մոտ և հորդորելով համոզեց նրան. և նա ամրոցից դուրս գալով գնաց Սուրմառի կոչված բերդաքաղաքը, բայց ամրոցը և իր ձեռքի տակ եղած մյուս բերդերը Գագիկին չհանձնեց»²⁴:

Պատմության ժամանակագրական տրամաբանությունը ներկայացվում է կայսրերի՝ Կոստանդինի, Ռոմանոսի, Միխայելի, Թեոդորոսի որդի Կոստանդին Մոնոմախի, Թեոդորայի, Կոմիանոսի և հունաց Դիոգենեսի ժամանակների հետ:

Պատմության 25 գլուխներից հետո հեղինակը թողնում է նաև հիշատակարան:

Հեղինակի կերպարը Պատմության մեջ

Արիստակեսին նախորդած դարի հայ պատմագրության մեջ արդեն նկատելի էր պատմագիր-հեղինակի կերպարի յուրահատկությունը՝ որպես գրական կերպարի (խոսքը Հովհաննես Դրասխանակերտու կերպարի մասին է իր իսկ Պատմության մեջ), ինչը հանդես է եկել նաև Արիստակեսի Պատմության մեջ: Հեղինակն այստեղ գործող ակտիվ կերպար է, որն արտահայտում է իր վերաբերմունքը: Այսպես՝ հռոմեացի գործի՝ իրար հետևից չորս անգամ 1041–1044 թթ., Հայոց աշխարհ արշավելու մասին գրում է. «Երբ մտաբերում եմ այդ աղետները, խեղճս թուչում է, միտքս՝ ցնորվում և ահավոր զարհուրանքից ձեռներս դողալուց՝ չեմ կարողանում շարունակել շարադրանքս, որովհետև դառն է այս պատմությունը և անհատնում ողբերի արժանի»²⁵:

Մեկ այլ տեղ՝ ԺԶ գլխում, գրում է. «Երբ որ հիշում եմ ինքնապաշտպանության և բողոքը, ինչ որ այնտեղ կատարվեց, արտասուքներից շունչս կտրվում է, սիրտս փոփոկվում է, միտքս՝ ցնորվում, ձեռքս՝ դողդողում, շարադրանքս չեմ կարողանում էլ առաջ տանել»²⁶:

²³ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 5:

²⁴ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 32:

²⁵ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 33:

²⁶ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 57:

Հեղինակը հաճախ հանդես է գալիս իր համակրություններով, ինչպես Բ գլխում. «Մինչև այստեղ այս պատմությունը մեզ հաճելի է»²⁷: Իսկ ԺԲ գլուխը սկսում է այսպես. «Այժմ կաշխատեմ ուժերիս ներածին հափ ընդարձակ գրել մեր պատմությունը, որպեսզի բոլորին ստիպեմ արտասվել»²⁸:

Արիստակեսը դեպքերի ականատեսն ու մասնակիցն է, որն ականհայտ է նաև ԺԲ գլխի վերջում, երբ խոսք է բացում Սմբատի լեռան և Արծնի կոտորածների մասին. «Արծնի այս տիուր պատմությունը այստեղ էլ թող դադարի, մենք բոլոր աղետալի անցքերը չկարողացանք գրի առնել, բայց մեր բաց թողածը ցանկացողը կարող է իմանալ ավերակներից: Մենք գրեցինք երկու տեղերի լեռան և այս քաղաքի, ողբալի պատմությունը, այսինքն՝ միայն այն, ինչ աչքով տեսանք, անցնելով նրա հարադեմ փորձությունների միջով, իսկ մյուս գավառների ու քաղաքների աղետալի անցքերը ո՛վ կգորի գրել. դրա համար երկար խոսել ու ժամանակ է պետք, մինչդեռ մենք մերը հնարավորին հափ համառոտեցինք»²⁹:

Արիստակես Լաստիվերցու Պատմության հավանական պատվիրատուն

Արիստակեսի Պատմության մեջ չի հիշատակվում որևէ մեկեհասի անուն, ավելին՝ Մ. Աբեղյանը գրում է. «Նա իսկապես քնարերգու բանաստեղծ է, բայց գրել է պատմություն և գրել է ոչ թե որևէ ուրիշ խնդրով կամ պատվերով, ինչպես նախորդ պատմագիրներն առհասարակ, այլ ինքնաբերաբար, իր տանջված սրտի զգացումները գեղելու պահանջից դրդված»³⁰:

Հետևելով Մ. Աբեղյանին՝ Գ. Մանուկյանը գրել է. «Չունենալով մեկեհաս, նա Պատմությունը գրել է առանց կողմնակի միջամտության, որտեղ դարի պատմական դեպքերը ներկայացրել է Հայաստանի ինքնուրույն քաղաքականության կողմնակից հայրենասեր կուսակցության տեսանկյունից»³¹:

Լ. Բաբայանն էլ գրում է, թե «Լաստիվերցի պատմագիրը մեկեհաս չի ունեցել, ինչպես նախորդ մի քանի պատմագիրները: Նրա «Պատմությունը» գրվել է իր իսկ նախաձեռնությամբ: Այդ առիթով կա հեղինակի անկեղծ խոստովանությունը. «Եւ արդ ո՛չ է պարտ անհաս եւ անձեռնարկելի իրաց պատմօղ լինել, կամ ընդ գրով արկանել, զորոց ոչ այլոց աշխատութիւն տուեալ մեզ, եւ ոչ յումեք է պահանջեցաւ ի մէնջ, եւ ոչ մեք կարօղ եմք ձեռն արկանել, վասն այնորիկ բազում ինչ հարկաւր պատմութեանց որ ընդ սոքօք են՝ անտէս արարաք, այլոց թողլով ճարտարաց եւ հարուստ մտաց, զի թերեւս պահանջեսցէ ոք ի նոցանէ»³²:

Նկատենք, որ խոսքն այստեղ «Հունաց թագավորի մասին, որ ձերբակալվեց պարսից թագավորի կողմից» վերնագրով պատմության վերջին՝ ԻԵ գլխի սկզբում տեղ գտած տողերի մասին է, որ լեզվաբան Վ. Գևորգյանը թարգ-

²⁷ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 7:

²⁸ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 46:

²⁹ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 51:

³⁰ Ա բ ե ղ յ ա ն. 1970, 60–61:

³¹ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, X:

³² Բ ա բ ա յ ա ն. 1981, 127:

մանել է այսպես. «Կարիք չկա պատմել կամ գրի առնել այնպիսի բաներ, որոնց վերահասու չես, ուստի և անիրագործելի են քեզ համար, մանավանդ որ ոչ ոք քեզ նեղություն չի տալիս ու չի պահանջում, որ անես, այդ պատճառով էլ այս կարգի շատ կարևոր պատմություններ մենք չըջանցեցինք, թողնելով ուրիշ ավելի ձեռնահաս ու գիտուն մարդկանց, թերևս մեկը պահանջի այդ նրանցից. Սրանով մենք կգրգռենք կարող մարդկանց նախաձեռնությունը, բայց քանի որ երկու թագավորների պատերազմը զանց առնելուց գործը կտուժի, անհրաժեշտ ենք համարում մեծամեծ իրողությունները կարճառոտ պատմել»³³:

Փաստենք, որ պատմության վերջին գլխում Արիստակեսը պարզ հասկացնում է, որ պատվիրատուն չի պահանջել այս մասին տեղեկություն տալ, սակայն որպեսզի իր Պատմությունը չտուժի, ինքը հարկ է համարում շատ կարևոր այդ տեղեկությունները գտնել կարճ պատմել, որը հետագայում առիթ կդառնա՝ «թերևս մեկը պահանջի այդ» ուրիշ «ձեռնահաս ու գիտուն» մարդուց: Ակնհայտ է՝ այս շարադրանքում Արիստակեսը պարզորոշ գրում է, որ, առհասարակ, ինչ-որ մեկը պիտի պատվեր տա, որ գրվի որևէ պատմական դեպքի մասին պատմություն, ինչը ոչ թե հերքում է Արիստակեսի պատվիրատու ունենալը, այլ ուղղակիորեն հաստատում է: Մինչդեռ Գ. Մանուկյանը այս մեջբերման միայն առաջին հատվածի մի արտահայտություն հիման վրա ծանոթագրության մեջ գրում է. «Սա ցույց է տալիս, որ Լաստիվերցին չի ունեցել իր պատմության մեկենասը»³⁴:

Մեկենաս չունենալու մասին գրում է նաև գրականագետ Դավիթ Գասպարյանը, սակայն իրավացիորեն որոշ վերապահում է անում. «Իր պատմությունը, ըստ երևույթին, գրել է առանց մեկենասի, քանզի պատվիրատուի անուն չի հիշում»³⁵:

Թեև Արիստակես Լաստիվերցին չի հիշատակում իր մեկենասի անունը, սակայն անհնար է, որ այդ դարում պատմություն գրվեր առանց մեկենաս-պատվիրատուի, մանավանդ նրանից առաջ ու հետո հանդես եկող պատմիչներն ունեն իրենց պատվիրատուները, իսկ Պատմության պատվիրատու կամ մեկենաս ունենալու հանգամանքը «ոչ միայն ձևական կամ ժանրային կաղապարով է թելադրված, այլև՝ ձեռագրական, գրչական արվեստի առանձնահատկությամբ»³⁶:

Պատմական արձակի պատվիրատու կամ մեկենաս ունենալը կայուն և կրկնելի էր հենց ժանրի սկզբնավորման շրջանում, թեև Հայր Դևոնդ Ալիշանը գրել է. «Կան և ինքնայոթարք գրողք, որպէս Բուզանդ, Զենովը, Լաստիվարացին, Մխիթարքն, Վարդան, Կիրակոս, Օրբելեանն, Մեծոփեցին, և այլն»³⁷:

Ամբողջ հարցն այն է՝ մեկենաս ունենալը պայմանավորված է նախ ձեռագրական արվեստի բնույթով, քանի որ ունեւոր ու ազդեցիկ մեկը պետք էր, որ հովանավորեր ձեռագրի վրա կատարվող գրչագրական ծախսերը, ապա-

³³ Լ ա ս տ ի վ եր ց ի. 1971, 101:

³⁴ Լ ա ս տ ի վ եր ց ի. 1971, 147:

³⁵ Գ ա ս պ ա ռ յ ա ն. 2009, 291:

³⁶ Հայ միջնադարյան գրականության ժանրեր. 1984, 18:

³⁷ Ա լ ի շ ա ն. 1901, 10:

Հովեր մագաղաթը, թանաքը և այլ անհրաժեշտ նյութեր, իսկ դա ավատական Հայաստանում իշխանական տան ժառանգը կարող էր անել:

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ մենք փորձեցինք որոնել Արխատակեսի Պատմության հավանական պատվիրատուին: Այդ նպատակով նշենք այն երևելի ազնվականներին, որոնց անունները հիշատակված են Արխատակեսի Պատմության մեջ:

Այսպես՝ Տայքի իշխան Դավիթ Կյուրապաղատի մասին գրում է. «Դավիթ Կյուրապաղատը հզոր, աշխարհաշեն, առատաձեռն ու աղքատասեր մարդ էր, իսկապես խաղաղություն սահմանող»³⁸:

Պատմության Բ գլխում հիշատակվում է «հզոր և պատերազմներում հաղթող»³⁹ Գագիկ Ա Բագրատունի թագավորը, որը «երկար ժամանակ վարելով թագավորությունը և բարի հիշատակի արժանանալով խոր ծերություն հասած վախճանվեց»⁴⁰: Նրա իշխանությունը ժառանգեցին «որդիները՝ Սմբատը, որին Հովհաննես էին կոչում, և նրա հարազատ եղբայր Աշոտը, Սմբատը հաղթանակում էր ու շատ գեր, բայց իմաստությունը, ասում են, շատերից բարձր էր, իսկ Աշոտը վայելչակազմ էր, քաջասիրտ ու պատերազմասեր»⁴¹:

Այս Բ գլխում նաև հիշատակվում են Սարգիս Սևանցի կաթողիկոսը, որ Ասողիկի Պատմության պատվիրատուն է եղել, ապա «վարդապետներ Սարգիսը, Տիրանունը և Ենովքը՝ կաթողիկոսարանում, Սամվելը, որ Կամրջածորի վանքի առաջնորդն էր, Հովսեփը, որ Հնձուց նախագահն էր, Ստեփաննոս Տարոնացին, որ աշխարհապատում գիրքը շարադրեց սքանչելի ոճով, սկսելով այն առաջին մարդուց՝ վերջացնում է Գագիկի վախճանով, որի մասին էլ այս պատմությունն է, նույն գավառացի Հովհաննեսը, որին Կոզեռն էին մականվանում, որը և մեր հավատի վարդապետությունը գրեց, չափազանց բանազետ Գրիգորը և շատ ուրիշներ»⁴²:

Պատմության մեջ հիշատակվում է նաև Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, որը Հովհաննես Սմբատի պատվերով կտակ գրեց և Անին իր մահից հետո ժառանգեց Բյուզանդիայի կայսրը: Կաթողիկոսի մասին այլուր արտահայտում է ոչ նպաստավոր կարծիք. «Պետրոսը սաստիկ գանձասեր էր, որի պատճառով և շատերը պախարակում էին նրան»⁴³, որով պարզապես բացառվում է Պետրոս Գետադարձի պատվիրատու լինելը:

Պատմության մեջ պատկերվում են նաև Վահրամ Պահլավունին, Վեստ Սարգիսը, Գագիկ Բ թագավորը: Ըստ պատմիչի՝ Վահրամ Պահլավունին «... մի հզոր, անվանի, բարեպաշտ ու վեհ մարդ էր, այնպես որ ոչ ոք չկար նրան հավասար»⁴⁴, և սա այն պատճառով, որ թագավորեցրել է Աշոտի որդի երիտասարդ Գագիկ Բ-ին⁴⁵: Մինչդեռ վերջինս, որի մասին գովեստով էր խոսել Վեստ Սարգիսն ճնշելու մասին, այս անգամ մեղադրում է Անիի բանա-

³⁸ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 2:

³⁹ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 5:

⁴⁰ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 5:

⁴¹ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 6:

⁴² Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 6:

⁴³ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 54:

⁴⁴ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 32:

⁴⁵ Տե՛ս Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 32:

լինե՞րը Պետրոսին հանձնելու համար. «Երդումների ու խաչի, թե խակամտության ու երկյուղած բնավորության պատճառով, չգիտեմ, Գազիկը հավատաց և քաղաքի բանալիները տվեց Պետրոսին, որ այն ժամանակ մեր Լուսավորչի հայրապետական գահի աթոռակալն էր, և մեծամեծ ուխտ ու պայմանով երկրի բոլոր հոգսերը հանձնեց նրան»⁴⁶:

Պատմության մեջ դրվատանքի խոսքեր են հնչում նաև Գրիգոր Մազիստրոսի մասին. «Վասակի որդի Գրիգորը, որը իմաստուն և աստվածաբանությանը հույժ քաջահմուտ մարդ էր, որի նմանը ոչ ոք չկար»⁴⁷:

Նկատենք, որ պատմիչի համակրանքը Բագրատունիների կողմն է. պատահական չէ, որ Բ գլխում խոսում է Բագրատունի թագավորների մասին, ավելացնում, թե «այս պատմությունը մեզ հաճելի է»⁴⁸, ապա անմիջապես անցնում Սարգիս Սևանցի կաթողիկոսի (992–1019) կենդանության ժամանակ Պետրոս Գետադարձի կաթողիկոս (1019–1058) դառնալուն, ինչն իր համար հաճելի չէր, ինչպես արդեն վերևում նկատելի է:

Արդ քննելով Պատմության Բ գլխի մի հատված, որը մեր խնդրո առարկայի համար ունի հատուկ կարևորություն՝ նշենք. «Ստեփաննոս Տարոնացին, որ զաշխարհապատում գգիրսն շարագրեաց սքանչելի յաւրինուածովք. սկսեալ ի մարդն առաջին եւ գայ բովանդակէ զպատմութիւն իւր ի վախճան Գազկայ, վասն որոյ պատմութիւնս է»⁴⁹: Այս նախադասությունը Վ. Գևորգյանը թարգմանել է այսպես. «Ստեփաննոս Տարոնացին, որ աշխարհապատում գիրքը շարադրեց սքանչելի ոճով, սկսելով այն առաջին մարդուց՝ վերջացնում է Գազիկի վախճանով, որի մասին էլ այս պատմությունն է»⁵⁰:

Ստեփանոս Ասողիկի առիթով ավելի վաղ նշել ենք. «Արիստակես Լաստիվերցին Ասողիկի պատմության մասին գրում է. «Ստեփանոս Տարոնացին, որ աշխարհապատում գիրքը շարադրեց սքանչելի ոճով, սկսելով այն մարդուց՝ վերջացնում է Գազիկի վախճանով»: Գազիկ Ա Բագրատունին թագավորել է 990–1020 թվականներին, ուստի պիտի ենթադրել, որ Ասողիկի պատմությունն ավարտվել է 1020 թվականից ոչ շուտ, հետևաբար նա մահացել է այդ թվականից հետո, թեև ընդունված է, որ Ասողիկն իր պատմությունն ավարտել է 1004 թվականին»⁵¹:

Նկատենք, որ Ասողիկի Պատմությունն ավարտվում է Գազիկ Ա թագավորի անվան հիշատակմամբ, սակայն խոսք չկա նրա վախճանի մասին: Այսպես՝ Ասողիկի Պատմության վերջին՝ իմ Գ գլխում կարդում ենք. «Նրանց երկիրն էլ հակառակությամբ իրենց մեջ բաժանեցին Հայոց արքա Գազիկն ու Գանձակի Փալտուն ամիրան»⁵², և այս տողով ավարտվում է Ստեփանոս Ասողիկի Պատմությունը:

⁴⁶ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 35:

⁴⁷ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 36:

⁴⁸ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 7:

⁴⁹ Տ է ր-Վ ա ր դ ա ն յ ա ն. 2012, 530:

⁵⁰ Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 5:

⁵¹ Ե դ ի ա զ ա ր յ ա ն. 2018, 382:

⁵² Տ ա ր ո ն ե ց ի. 2000, 345:

Համադրելով փաստեր՝ պարզում ենք, որ Ասողիկի պատմության մեջ ոչ մի խոսք չկա Գագիկ Ա-ի վախճանի մասին, ուստի նա կենդանի է եղել, երբ Ասողիկն ավարտել է իր Պատմությունը, իսկ Լաստիվերցու Պատմության «ի վախճանի Գագիկայ» արտահայտության մեջ պարտադիր չէ, որ վախճանը հենց «մահ» նշանակեր, այն կարող էր վերաբերել նաև նրա գործերի ավարտին, քանի որ «վախճան» բառը գրաբարում նշանակում էր «1. գ. Վերջ, աւարտ: 2. Կեանքի վերջ, մահ: 3. Նպատակ, դիտաւորութիւն: 4. մ. Վերջապէս, վերջիվերջոյ»⁵³:

Ամեն դեպքում մեզ հետաքրքրողը «վասն որոյ պատմութիւնս է» արտահայտությունն է, որը Վ. Գևորգյանը թարգմանել է «որի մասին է այս պատմությունը» կրկնելով Մինաս քահանայ Տեր-Պետրոսյանցին⁵⁴:

«Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի հեղինակները «վասն» բառը բացատրել են «ի ձեռն, միջնորդութեամբ, ըստ համաձայնութեան»⁵⁵, իսկ «վասն որոյ» կապակցությունը բացատրված է որպես «ոյր վասն, նմին իրի, վասն այնորիկ»⁵⁶:

Ռ. Ղազարյանը «Գրաբարի բառարան»-ում ներկայացրել է «վասն» բառի հետևյալ իմաստները. «1. Մասին, վերաբերեալ: 2. Համար, նպատակով: 3. Պատճառով: 4. Ձեռքով, միջոցով, միջնորդութեամբ: 5. Փոխանակ»⁵⁷, նույն բառարանում «վասն որոյ» կապակցությունը բացատրված է «1. Ինչի համար որ: 2. Ուստի, այդ պատճառով»⁵⁸ իմաստներով:

Նկատենք, որ «վասն որոյ պատմութիւնս է» արտահայտությունը կարող է թարգմանվել ոչ միայն «որի մասին է այս պատմությունը», նաև՝ «որի պատճառով է այս պատմությունը», «որի համար է այս պատմությունը», «որի ձեռքով է այս պատմությունը», «որի միջոցով է այս պատմությունը», «որի միջնորդությամբ է այս պատմությունը» ձևերով:

Մենք բացառում ենք «որի ձեռքով է այս պատմությունը» և «որի մասին է այս պատմությունը» տարբերակներն այն պարզ պատճառով, որ Լաստիվերցու Պատմությունը Գագիկի ձեռքով չէր գրվում, ապա և Պատմությունը Գագիկ Ա թագավորի մասին չէր, քանի որ Արիստակես Լաստիվերցին Պատմության հենց Բ գլխում գրում է. «Իսկ Գագիկ թագավորը երկար ժամանակ վարելով թագավորությունը և բարի հիշատակի արժանանալով խոր ծերության հասած վախճանվեց»⁵⁹: Այսինքն՝ հենց սկզբում պատմիչը գրում է Գագիկ Ա թագավորի վախճանի մասին, իսկ հետագա շարադրանքում նրա անունն առհասարակ չկա, ուստի «որի մասին է այս պատմությունը» արտահայտությունը պետք է ընդհանրապես բացառել:

⁵³ Ղ ա գ ա Ր յ ա ն. 2000, 492:

⁵⁴ Տե՛ս Արիստակէս Լաստիվերցի Վարդապետի Հայոց պատմութիւն. 1893, 7:

⁵⁵ Ա վ ե տ ի ք ե ա ն, Ս ի լ Ր մ է լ ե ա ն, Ա լ գ ե Ր ե ա ն. 1837, 785:

⁵⁶ Ա վ ե տ ի ք ե ա ն, Ս ի լ Ր մ է լ ե ա ն, Ա լ գ ե Ր ե ա ն. 1837, 785:

⁵⁷ Ղ ա գ ա Ր յ ա ն. 2000, 502:

⁵⁸ Ղ ա գ ա Ր յ ա ն. 2000, 502:

⁵⁹ Լ ա ս տ ի վ ե Ր ց ի. 1971, 5:

Ուրեմն՝ այդ հատվածը պետք է հասկանալ այլ իմաստով և թարգմանել՝ «որի պատճառով է այս պատմությունը», «որի համար է այս պատմությունը», «որի միջոցով է այս պատմությունը», «որի միջնորդությամբ է այս պատմությունը» տարբերակներից որևէ մեկով: Շեշտենք՝ բոլոր այս դեպքերում կարող ենք ենթադրել, որ պատմության պատվիրատուն հենց Գագիկ Ա թագավորն է (990–1020), ինչը ժամանակագրական առումով ևս հնարավոր է, քանի որ Գագիկ Ա-ն մահացել է 1020 թվականին, երբ Լաստիվերցին կլինեի մոտ 20 տարեկան և այդ տարիքում կարող էր պատվեր ստացած լինել թագավորից:

Ի դեպ, Գագիկ Ա թագավորի ժամանակակիցներն են Ստեփանոս Ասողիկը ու նրա Պատմության պատվիրատու Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը (992–1019):

Նման հանգամանքներում բնական է ենթադրել, որ Գագիկը կարող էր պատվիրել Արխատակեսին գրելու Պատմություն, իսկ ինքը կնքեր մահկանացուն, որից հետո, բնականաբար, Պատմությունը կշարունակվեր՝ հասնելով իր տրամաբանական ավարտին:

Եզրակացություն

1. Արխատակես Լաստիվերցու Պատմությունը, ինչպես իրեն նախորդած և հաջորդած պատմիչների Պատմությունները, ունի պատվիրատու՝ որպես պատմագրական արձակ, որի համար կայուն ու կրկնելի ժանրակազմ հատկանիշ է մեկենաս-պատվիրատու ունենալը:

2. Պատմության մեջ հեղինակի համակրանքը Բագրատունիների կողմն է:

3. Պատմության Բ գլխի «վասն որոյ պատմութիւնս է» արտահայտությունը, որը թարգմանվել է «որի մասին է այս պատմությունը», անհամոզիչ է, քանի որ Արխատակեսի Պատմությունը Գագիկ Ա թագավորի մասին չէ:

4. Հաշվի առնելով «վասն» բառի գրաբարյան իմաստային նրբերանգները՝ նախընտրել ենք այլ տարբերակներ՝ «որի պատճառով է այս պատմությունը», «որի համար է այս պատմությունը», «որի միջոցով է այս պատմությունը», «որի միջնորդությամբ է այս պատմությունը»: Իսկ այս բոլոր դեպքերում Պատմության հավանական պատվիրատու կարող է համարվել Գագիկ Ա Բագրատունի թագավորը:

5. Հավանական է, որ Գագիկ թագավորն Արխատակեսին պատվիրել է գրել Պատմություն, իսկ ինքը կնքել է մահկանացուն: Սակայն հեղինակը շարունակել է սկսած պատմությունը՝ ներկայացնելով իր կողմից կարևոր համարվող պատմական դեպքերը:

Վանո Եղիազարյան – բ. գ. դ., Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, բնագրագիտություն, գրաբար բնագրերի փոխադրություն, բանագիտություն, արդի հայ գրականություն և գրական քննադատություն: Հեղինակ է 27 գրքի և 100-ից ավելի հոդվածի: ORCID: 0009-0006-3176-8436; vano.exiazaryan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1970, Երկեր, հ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 635 էջ:

Ալիշան Ղ. 1901, Հայապատում, Պատմիչք եւ պատմությունք Հայոց, Վենետիկ, Ի վանս Ս. Ղազարու, 649 էջ:

Ավետիքեան Գ., Սիրմելեան Խ., Աւգերեան Մ. 1837, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ տպ. Սրբոյն Ղազարոյ, 1067 էջ:

Արիստակէս Լաստիվերտցի Վարդապետի Հայոց պատմությունը. 1893, թարգմ.՝ Մ. քահանայ Տէր-Պետրոսեանց, Ալէքսանդրապօլ, 233 էջ:

Արիստակէս Լաստիվերտցի. 1971, Պատմություն, թարգմ.՝ Վ. Ա. Գևորգյանի, առաջ. և ծանոթ.՝ Գ. Մ. Մանուկյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 154 էջ:

Բաբայան Լ. 1981, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության, IX–XIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 391 էջ:

Գասպարյան Ղ. 2009, Հայ հին և միջնադարյան գրականության պատմություն, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 925 էջ:

Եղիազարյան Վ. 2018, Գրիգոր Նարեկացին և հայ գրականությունը 10-րդ դարում, Երևան, «Արմավ» հրատ., 560 էջ:

Կիրակոս Գանձակեցի. 1982, Հայոց պատմություն, աշխատ.՝ Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող», 352 էջ:

Հայ միջնադարյան գրականության ժանրեր. 1984, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 427 էջ:

Ղազարյան Ռ. 2000, Գրաբարի բառարան, հ. 2, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 685 էջ:

Մատթեոս Ուռեհայեցի. 1991, Ժամանակագրություն, աշխատ.՝ Հր. Բարթիկյանի, Երևան, Երևանի համալս. հրատ., 538 էջ:

Մխիթար Այրիվանեցի. 1867, Պատմություն ժամանակագրական, Պետերբուրգ, տպ. Կայսերական ճեմարանի գիտութեանց, 84 էջ:

Մխիթար Անեցի. 2023, Հանդիսարանների աշխարհավեպ մատյան, աշխատ.՝ Վ. Եղիազարյանի, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 304 էջ:

Չամչեանց Մ. 1784, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, տպ. Պիետրո Վալվազիանիի, 803 էջ:

Պատմութիւն Արիստակէայ Վարդապետի Լաստիվերտցոյ. 1844, Վենետիկ, Ի տպ. Սրբոյն Ղազարու, 124 էջ:

Պատմութիւն Արիստակէայ Վարդապետի Լաստիվերտցոյ. 1901, Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, Ի տպ. Սրբոյն Ղազարու, 144 էջ:

Պատմութիւն Արիստակէայ Վարդապետի Լաստիվերտցոյ. 1912, Թիֆլիս, Էլէկտրատպ. Օր. Ն. Աղանեանի, 191 էջ:

Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ. 1963, աշխատ.՝ Կ. Յուզբաշյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 158 էջ:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի. 2000, Տիեզերական պատմություն, թարգմ.՝ առաջ. և ծանոթ. Վ. Հ. Վարդանյանի, Երևան, Երևանի համալս. հրատ., 456 էջ:

Տէր-Վարդանեան Գ. 2012, Արիստակէս Լաստիվերցու մատենագրութիւնը. – Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, ԺԱ դար, Երևան, «Նաիրի» հրատ., 1121 էջ:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1870 էջ:

ВЕРОЯТНЫЙ ЗАКАЗЧИК «ИСТОРИИ» АРИСТАКЕСА ЛАСТИВЕРЦИ

ВАНО ЕГИАЗАРЯН

Р е з ю м е

Ключевые слова: Аристакеc Ластиверци, жанровая характеристика, перевод текста с древнеармянского языка на современный армянский язык, вероятный заказчик царь Гагик I.

1. «История» Аристакеcа Ластиверци, как и «Истории» его предшественников и последователей, имеет заказчика, так как наличие мецената-заказчика является устойчивой и повторяемой жанровой особенностью историографической прозы. 2. Симпатии автора в «Истории» на стороне Багратидов. 3. Перевод выражения «*վառն քրոյ լաստիվերցիս է*» – «о ком эта история» – во второй главе «Истории» является неубедительным, поскольку в «Истории» Аристакеcа повествуется не о царе Гагике I. 4. Учитывая древнеармянские семантические нюансы слова «*վառն*» (основное значение: «о»), мы отдали предпочтение другим вариантам перевода: «благодаря кому эта история», «для кого эта история», «посредством кого эта история», «при чьем посредничестве эта история». Во всех этих случаях вероятным автором «Истории» можно считать царя Гагика I Багратуни. 5. Царь Гагик заказал Аристакеcу написать «Историю», но в скором времени скончался. Тем не менее автор продолжил начатую работу, изложив те исторические события, которые он считал важными.

Вано Егиазарян – д. филол. н., проф. кафедры армянского языка и литературы Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна, научный сотрудник отдела древней и средневековой армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, текстология – с изложением древнеармянских (на грабаре) оригиналов, фольклористика, современная армянская литература и литературная критика. Автор 27 книг и более 100 статей. ORCID:0009-0006-3176-8436; vano.exiazaryan@mail.ru

THE PROBABLE PROMOTER OF THE “HISTORY”
BY ARISTAKES LASTIVERTSI

VANO YEGHIAZARYAN

Summary

Keywords: Aristakes Lastivertsi, genre characteristics, translation of the text from ancient Armenian into modern Armenian, the probable promoter, King Gagik I.

1. The “History” by Aristakes Lastivertsi, like the “Histories” of his predecessors and successors, had a promoter, since the presence of a patron-promoter was a stable and repeatable genre feature of historiographical prose. 2. In the “History”, the author’s sympathy was with the Bagratuni dynasty. 3. The translation of the expression «վասն որոյ պատմութիւնս է» – “who is this story about” – in the second chapter of the “History” is unconvincing, since the “History” of Aristakes does not tell about King Gagik I. 4. Taking into account the ancient Armenian semantic nuances of the word «վասն» (the main meaning: “about”), we prefer other translation options: “thanks to whom this story is”, “for whom this story is”, “through whom this story is”, “through whose mediation this story is”. In all these cases, King Gagik I Bagratuni could be considered the probable promoter of the “History”. 5. King Gagik I ordered Aristakes Lastivertsi to write the “History”, but soon passed away. Nevertheless, the author continued the work he had begun, outlining those historical events that he considered important.

Vano Yeghiazaryan – Doctor of Sciences in Philology, Researcher at the Department of Ancient and Medieval Armenian Literature of the Institute of Literature after M. Abegyan of NAS RA, Professor at the Department of Armenian Language and Literature of Vanadzor State University after O. Tumanyan. Scientific interests: ancient Armenian and medieval Armenian literature, textual studies with presentation of ancient Armenian (in grabar) originals, folklore studies, modern Armenian literature and literary criticism. Author of 27 books and over 100 articles. ORCID:0009-0006-3176-8436; vano.exiazaryan@mail.ru